

**«ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ I»
ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2015թ.**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. «Վարկային Պորտֆելի Արժեթղթավորման Հիմնադրամ I» արժեթղթավորման հիմնադրամի կառավարման մարմինների տարեկան զեկույց
2. «Վարկային Պորտֆելի Արժեթղթավորման Հիմնադրամ I» արժեթղթավորման հիմնադրամի պատասխանատու անձանց հայտարարություն
3. «Վարկային Պորտֆելի Արժեթղթավորման Հիմնադրամ I» արժեթղթավորման հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
4. Անկախ աուդիտորական եզրակացություն

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Ընդհանուր նկարագիր

«Վարկային Պորտֆելի Արժեթղթավորման Հիմնադրամ I» արժեթղթավորման հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) ոչ առևտրային կազմակերպություն է՝ գրանցված ՀՀ կենտրոնական բանկում որպես արժեթղթավորման հիմնադրամ, որը հիմնադրվել է 2015 թվականի օգոստոսի 31-ին «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բացառապես արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկման գործունեություն իրականացնելու նպատակով: Հիմնադրամը գործում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 24-ը՝ մինչև 18 ամիս երկարաձգման հնարավորությամբ:

Գործունեության համառոտ նկարագիր

Հիմնադրամը դեկտեմբերի 14-ին նախաձեռնող հինգ վարկային կազմակերպություններից ձեռք է բերել ընդհանուր 495,877,138 ՀՀ դրամ և 1,258,975 ԱՄՆ դոլար մնացորդային գումարով վարկեր:

Նախաձեռնող ՈԻՎԿ-ներ	Դրամ	Դոլար
«ՔԱԴԴ ԱգրոԿրեդիտ» ՓԲԸ	164,149,621	-
«Գառնի Ինվեստ» ՓԲԸ	35,246,636	-
«Գլոբալ Կրեդիտ» ՓԲԸ	67,591,861	272,773
«Նոր Հորիզոն»	30,646,837	593,901
«Կամուրջ» ՓԲԸ	198,242,183	392,301
Ընդամենը	495,877,138	1,258,975

Հիմնադրամը նշված վարկերի ապահովմամբ թողարկեց, իսկ դեկտեմբերի 24-ին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ միջոցով փակ աճուրդով տեղաբաշխեց 446,260,000 ՀՀ դրամ և 1,132,800 ԱՄՆ դոլար գումարի չափով ոչ փաստաթղթային, անվանական պարտատոմսեր:

	Քանակ	1 պարտատոմսի անվանակ արժեք	Ընդհանուր անվանական արժեք	Ժամկետը	Արժեկտրոնի դրույքը
Դրամային	44,626	10,000 դրամ	446,260,000	3 տարի	15%
Դոլարային	11,328	100 դոլար	1,132,800	3 տարի	8.5%

Հիմնադրամը դեկտեմբերի 24-ին թողարկել է նաև հինգ դրամային և երեք դոլարային մասնակցության վկայագրեր, որոնք ձեռք են բերվել նախաձեռնող վարկային

կազմակերպությունների կողմից՝ յուրաքանչյուրը իր կողմից վաճառված վարկային պորտֆելի 10%-ի չափով: Այս արժեթղթերը ստորադաս են, և դրանց դիմաց որևէ վճարում չի կատարվելու, քանի դեռ վճարված չեն պարտատոմսերի գծով վճարման ենթակա բոլոր գումարները:

Նախաձեռնող ՈւՎԿ-ներ	Դրամ	Դոլար
«ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ» ՓԲԸ	16,419,621	-
«Գառնի Ինվեստ» ՓԲԸ	3,526,636	-
«Գլոբալ Կրեդիտ» ՓԲԸ	6,761,861	30,429
«Նոր Հորիզոն»	3,076,836	66,054
«Կամուրջ» ՓԲԸ	19,832,183	43,796
Ընդամենը	49,617,137	126,175

Համաձայն նախաձեռնողների հետ կնքած՝ Ակտիվների առուվաճառքի և սպասարկման պայմանագրի՝ Հիմնադրամը նախաձեռնողներից յուրաքանչյուրին վարկերի ձեռք բերման դիմաց վճարվելիք գումարից պահել է որոշակի գումար, որը հավասար է պարտատոմսերի առաջին վճարման ամսաթվին կանխատեսվող մայր գումարի և արժեկտրոնների գումարին: Այդ գումարը պետք է նախաձեռնողներին վճարվի 3 ամսվա ընթացքում՝ պայմանով, որ վարկառուների կողմից կատարված վճարումները կբավականացնեն պարտատոմսերի առաջին վճարումը պատշաճ կատարելու համար:

Այլ տեղեկություններ

1. Հիմնադրամի կողմից թողարկված պարտատոմսերը 2016 թվականի հունվարի 27-ին ցուցակվել են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ ֆոնդային բորսայում և ընդգրկվել են պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում: Դրամային և դոլարային պարտատոմսերին տրվել է համապատասխանաբար LPSFB2 և LPSFB1 բորսայական հապավումը: Ցուցակման պահից թույլատրվում է պարտատոմսերով հասցեական առևտուրը և ռեպո համաձայնագրերի կնքումը:
2. Դեկտեմբերի 25-ին Հիմնադրամի և «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի միջև կնքվել է Կարգավորող շուկայում պարտատոմսերի շուկայի ստեղծման ծառայությունների մատուցման պայմանագիր, համաձայն որի «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ի դիտորդ խորհրդի կողմից հաստատված Շուկա ստեղծողի կանոններին համապատասխան բորսայում իրականացնում է Հիմնադրամի կողմից թողարկված պարտատոմսերի շուկայի ստեղծումը (մարքեթ-մեյքինգ):
3. 2016թ. թվականի մարտի 14-ին Հիմնադրամը կատարեց առաջին վճարումը պարտատոմսերի սեփականատերերին: Դրամային և դոլարային պարտատոմսերի համար կատարված մասնակի մարումը կազմել է համապատասխանաբար 63,904,432 դրամ և 241,966.08 դոլար, իսկ արժեկտրոնը՝ համապատասխանաբար 16,734,750 դրամ և 11,800,377 դրամ (24,072 դոլարին

համարժեք դրամ): Վճարման հետ կապված տեղեկատվությանը կարելի է ծանոթանալ <http://capital.com.am/wp-content/uploads/2016/03/15.03.16-significant-matters-disclosure.pdf> հղումով:

Վարկային պորտֆելի նկարագիրը

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում վարկերի գծով կատարվել են 16,591,535 դրամ և 50,817 դոլար գումարի չափով մարումներ, որի արդյունքում Հիմնադրամի վարկային պորտֆելի մնացորդը կազմել է 479,285,603 դրամ և 1,208,157 դոլար:

Դրամային վարկային պորտֆելի բաշխվածությունը առ 31.12.2015թ.

Նախաձեռնող ՈւՎԿ-ներ	Ճյուղ	Սկզբնական		Վարկի մարումներ		31/12/15 դրությամբ	
		Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ
ՔԱՐԴ	Ագրո	155,883,343.2	109	3,440,373.9	0	152,442,969.3	109
ԱգրոԿրեդիտ	ՓՄՁ	8,266,278.0	5	189,202.0	0	8,077,076.0	5
Գլոբալ Կրեդիտ	Սպառողական	67,591,861.4	32	2,129,946.3	0	65,461,915.1	32
Գառնի Ինվեստ	Սպառողական	35,246,635.9	22	3,775,402.2	0	31,471,233.7	22
Նոր Հորիզոն	Ագրո	13,920,322.1	9	366,354.1	0	13,553,968.0	9
	Սպառողական	15,488,074.3	17	494,440.6	0	14,993,633.7	17
	ՓՄՁ	1,238,440.0	1	0.0	0	1,238,440.0	1
Կամուրջ	Սպառողական	73,922,653.1	50	3,246,092.3	0	70,676,560.8	50
	ՓՄՁ	124,319,529.5	53	2,949,723.1	0	121,369,806.4	53
Ընդամենը		495,877,137.5	298	16,591,534.5	0	479,285,603.0	298

Դոլարային վարկային պորտֆելի բաշխվածությունը առ 31.12.2015թ.

Նախաձեռնող ՈւՎԿ-ներ	Ճյուղ	Սկզբնական		Վարկի մարումներ		31/12/15 դրությամբ	
		Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ
Գլոբալ Կրեդիտ	ՓՄՁ	272,773.1	44	11,038.2	1	261,734.9	43
Նոր Հորիզոն	Ագրո	423,900.7	80	13,893.5	1	410,007.2	79
	ՓՄՁ	170,000.3	39	18,554.5	3	151,445.8	36
Կամուրջ	Ագրո	181,857.0	56	3,725.0	0	178,132.0	56
	Սպառողական	84,503.0	24	1,812.3	0	82,690.7	24
	ՓՄՁ	125,941.0	28	1,794.0	0	124,147.0	28
Ընդամենը		1,258,975.0	271	50,817.5	5	1,208,157.5	266

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա են մեկ դրամային ժամկետանց վարկ՝ 801,499 դրամ մնացորդով և յոթ դոլարային ժամկետանց վարկեր՝ 62,435 դոլար ընդհանուր մնացորդով:

Դրամային ժամկետանց վարկերի բաշխվածությունը առ 31.12.2015թ.

Նախաձեռնող ՈԻՎԿ-ներ	Ընդամենը ժամկ. վարկեր		Ժամկ. գումար	Ժամկ. տոկոս	Մինչև 30 օր ժամկ. վարկեր		30 օրից ավել ժամկ. վարկեր	
	Գումար	Քանակ			Գումար	Քանակ	Գումար	Քանակ
ՔԱԸԴ	801,449.0	1	0.0	11,786.2	801,449.0	1	0.0	0
ԱգրոԿրեդիտ	0.0	0	0.0	0.00	0.0	0	0.0	0
Գլոբալ Կրեդիտ	0.0	0	0.0	0.00	0.0	0	0.0	0
Գառնի Ինվեստ	0.0	0	0.0	0.00	0.0	0	0.0	0
Նոր Հորիզոն	0.0	0	0.0	0.00	0.0	0	0.0	0
	0.0	0	0.0	0.00	0.0	0	0.0	0
	0.0	0	0.0	0.00	0.0	0	0.0	0
Կամուրջ	0.0	0	0.0	0.00	0.0	0	0.0	0
	0.0	0	0.0	0.00	0.0	0	0.0	0
Ընդամենը	801,449.0	1	0.0	11,786.2	801,449.0	1	0.0	0

Դոլարային ժամկետանց վարկերի բաշխվածությունը առ 31.12.2015թ.

Նախաձեռնող ՈԻՎԿ-ներ	Ընդամենը ժամկ. վարկեր		Ժամկ. գումար	Ժամկ. տոկոս	Մինչև 30 օր ժամկ. վարկեր		30 օրից ավել ժամկ. վարկեր	
	Գումար	Քանակ			Գումար	Քանակ	Գումար	Քանակ
Գլոբալ Կրեդիտ	0.0	0	0.0	0.00	0.0	0	0.0	0
Նոր Հորիզոն	62,435.5	7	1,808.5	902.43	62,435.5	7	0.0	0
	0.0	0	0.0	0.00	0.0	0	0.0	0
Կամուրջ	0.0	0	0.0	0.00	0.0	0	0.0	0
	0.0	0	0.0	0.00	0.0	0	0.0	0
	0.0	0	0.0	0.00	0.0	0	0.0	0
Ընդամենը	62,435.5	7	1,808.5	902	62,435.5	7	0.0	0

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Պարտատոմս/Վարկային պորտֆել հարաբերակցությունը դրամային և դոլարային պարտատոմսերի համար կազմել է համապատասխանաբար 93.1% և 93.8%:

Հիմնական ռիսկերը

Հիմնադրամի գործունեության վրա ազդող ռիսկերը բացահայտված են Հիմնադրամի կողմից թողարկված պարտատոմսերի ազդագրում, և հաշվետու տարվա վերջի դրությամբ առկա չեն բացահայտված ռիսկերից շեղումներ:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ Ընկերության պատասխանատու անձինք, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան գեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքերը և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Ընկերությունը:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Անուն, ազգանուն/ Անվանում	Պաշտոն	Պատասխանատվության շրջանակ
Անահիտ Թադևոսյան	Տնօրենների խորհրդի	Տնօրենների խորհրդի աշխատանքների
Կարեն Պետրոսյան	Տնօրենների խորհրդի անդամ	Կառավարում կանոնադրությամբ տրված լիազորությունների շրջանակում
Կարեն Համբարձումյան	Տնօրենների խորհրդի անդամ	Կառավարում կանոնադրությամբ տրված լիազորությունների շրջանակում
Լուիզա Իգրարյան	Տնօրենների խորհրդի անդամ	Կառավարում կանոնադրությամբ տրված լիազորությունների շրջանակում
Օնիկ Խերանյան	Տնօրենների խորհրդի անդամ	Կառավարում կանոնադրությամբ տրված լիազորությունների շրջանակում
Սամսոն Ավետյան	Տնօրենների խորհրդի անկախ անդամ	Կառավարում կանոնադրությամբ տրված լիազորությունների շրջանակում
Արթուր Մելիքյան	Տնօրենների խորհրդի անկախ անդամ	Կառավարում կանոնադրությամբ տրված լիազորությունների շրջանակում
Հիմնադրամի կառավարիչ՝ «Կապիտալ Ինվեստմենթս» ՓԲԸ Ղեկավար՝ Տիգրան Կարապետյան	Գլխավոր տնօրեն	Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարում
«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ Ղեկավար՝ Արթուր Հարությունյան	Տնօրեն/Բաժնետեր	Հաշվապահական հաշվառում վարում, ֆինանսական հաշվետվությունների կազմում և ներկայացում

«Վարկային Պորտֆելի Արժեթղթավորման Հիմնադրամ I»-ի
Կառավարիչ «Կապիտալ Ինվեստմենթս» ՓԲԸ
Գլխավոր Տնօրեն

(Ստորագրություն)



Տիգրան Կարապետյան